600.0368.27.09.18

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի №368Լ
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՔԱՆԱԿՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 11-րդ հոդվածները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի N1536-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) անդամներին, աշխատակիցներին և կառուցվածքային ստորաբաժանումներին հատկացված հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հաստատել Հանձնաժողովի անդամների, աշխատակիցների և կառուցվածքային ստորաբաժանումների հեռախոսակապի ծառայությունների սահմանաքանակները՝ համաձայն N2 հավելվածի:
3. Հաստատել Հանձնաժողովի անդամների, աշխատակիցների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հեռախոսակապի ծառայությունների փաստացի օգտագործման հաշվարկը կատարելու կարգը՝ համաձայն N3 հավելվածի:
4. Հանձնաժողովի կողմից հաստատված հեռախոսակապի ծառայությունների սահմանաքանակների սահմանաչափերը չգերազանցելու, այդ սահմանաչափերը գերազանցող աշխատողների կողմից գումարների վերականգնման գործընթացի

նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հանձնաժողովի գլխավոր քարտուղարին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք.Երևան
27 սեպտեմբերի 2018թ.